ՆԷՊ-Ը ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄԸ

ՍՏԵՓԱՆՅԱՆ Ն. Ռ.

Հայաստանի խորհրդային իշխանությունը ծանր ժառանգություն ստացավ: Բազմիցս ավերված ու թալանված, գաղթականներով ու որբերով հեղեղված Հայաստանը տնտեսական խոր ճգնաժամի մեջ էր: Կանգ էին առել արդյունաբերական ձեռնարկությունները, իսկ գյուղատնտեսական ցանքատարածքները կրճատվել էին ավելի քան 4 անգամ[1]: Ավերվել էր ոռոգման համակարգը, չէին աշխատում էլեկտրակայանները: Խորհրդային կարգերի հաստատման մասին 1920 թ. նոյեմբերի 28-ի հռչակագրում նշված է. «Քաղաքները ավեր, շենքերը ամայի ու անմարդաբնակ, երթուղին քարուքանդ, կանգ առած, ողբ ու կական, աղի արտասուք է ծորում Հայաստանի մի ծայրից մյուսը»[2]:

Այսպիսի ծանր պայմաններում հաստատելով խորհրդային իշխանություն՝ հեղկոմը, առանց լուրջ հաշվարկների, հետևելով Ռուսաստանի օրինակին, երկրում մտցրեց ռազմական կոմունիզմի քաղաքականություն: Սակայն հայկական գյուղում չկային կալվածատիրական և հարուստ տնտեսություններ, և բռնագրավումների ամբողջ ծանրությունն ընկավ գյուղական բնակչության վրա: Նոր քաղաքականությունը զանգվածային դժգոհությունների տեղիք տվեց: Հեղկոմը հարկադրված էր մի քանի ամիս անց վերանայել դա:

Ռազմական կոմունիզմի՝ խուզարկումների և բռնագրավումների քաղաքականությունը այլևս չէր նպաստում տնտեսության զարգացմանը: 1920 թ. սկզբներին խորացող համատարած տնտեսական ճգնաժամի դեմ պայքարի հիմնական ճակատը գյուղատնտեսական արտադրության վերականգնումն էր: Անհրաժեշտ էր բարձրացնել գյուղացիության անձնական շահագրգռվածությունը, բոլոր միջոցներով նպաստել նրա տնտեսության ամրապնդմանը, ավելացնել գյուղատնտեսական մթերքների արտադրությունը: Դա բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման և սովի դեմ պայքարելու հիմնական միջոցն էր:

Կուսակցության X համագումարը (1921 թ. մարտ), ելնելով երկրի տնտեսական զարգացման պահանջներից, վերացրեց ռազմական կոմունիզմի քաղաքականությունը և մտցրեց նոր տնտեսական քաղաքականություն՝ նէպ: Թեև այդ ժամանակ ԽՍՀՄ-ը դեռևս չէր ձևավորվել, բոլոր հանրապետությունները, ներառյալ՝ Հայաստանը, հաշվի առնելով նէպի հիմնական սկզբունքները, այնուամենայնիվ, վերանայեցին իրենց տնտեսական քաղաքականությունը:

Նէպ-ին անցնելուց հետո, ի տարբերություն նախորդ փուլի, առաջին իսկ տարում սաստկացավ գյուղացիության՝ ավելի շատ և

---

[1] *Социалистическое строительство Арм. ССР, 1920-40, Е., 1970, с. 23.*

[2] *Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը և սովետական իշխանության հաստատումը Հայաստանում, Ե., 1960, էջ 403:*

ավելի լավ հողեր սեփականացնելու ձգտումը: Ռուսաստանի բոլոր գավառներում 1922-1924 թթ. ավելացան ցանքատարածքները, բարձրացավ բերքատվությունը:

Նէպ-ի պայմաններում հարկ եղավ վերակառուցել ժողովրդական տնտեսության կառավարումը: 1921 թ. մայիսին ժողտնտխորհի կազմում ստեղծվեցին արդյունաբերության ճյուղային 16 գլխավոր վարչություններ: Առավել խոշոր ձեռնարկությունները կառավարելու նպատակով կազմակերպվեցին մոտ 430 տրեստներ: Կազմավորվեց կենտրոնական բանկը:

Մանր ապրանքային արտադրության, առևտրի, վարձակալության թույլտվությունը ավելի նպաստեց գյուղատնտեսական արտադրության բարձրացմանը և գյուղացիների նոր տիպի շերտավորմանը: Միջակ գյուղացին դարձավ ռուսական գյուղի հիմնական դեմքը: Խիստ կրճատվեցին չքավոր և բատրակային տնտեսությունները, սահմանափակվեց կուլակների գործունեությունը:

Խորհրդային իշխանությունը, անցնելով նէպ-ին, հաշվի էր առնում գյուղացիության մասնավոր սեփականատիրական հոգեբանությունը և նրա հետ մտնում առևտրական հարաբերությունների մեջ: Հասկանալի է, որ շուկայական հարաբերությունների վերականգնումն իր հերթին տանում էր դեպի կապիտալիստական տարրերի որոշակի աշխուժացում: Սակայն այլ ելք չկար: Փաստորեն, խորհրդային տնտեսության հետագա զարգացումը պետք է գնար ոչ թե կապիտալիզմի մնացուկների վերացման ուղիով, այլ դրանց զարգացման: Իշխանությունները կանխազգում էին վտանգը և միջոցներ ձեռնարկում կապիտալիզմի զարգացումը որոշակի շրջանակների մեջ պահելու համար: Այս պայմաններում բարձրանում էր պետության կարգավորիչ դերը:

Հայաստանի գյուղացիությունը հիմնականում ճիշտ ըմբռնեց նէպ-ի էությունը: Այսպես, նէպ-ին անցնելու առաջին տարվա համար սահմանված 700 հազար փութ պարենհարկի փոխարեն հավաքվեց և մուծվեց 726 հազար փութ[3]:

Հայաստանում նէպ-ին անցնելը ոչ միայն պատմական անհրաժեշտություն էր, այլև փրկության միակ ճիշտ ուղին՝ տնտեսությունը վերականգնելու և բնակչության ֆիզիկական գոյությունը պահպանելու համար:

Հայաստանի կառավարությունը 1921 թ. հունիսի 21-ին դեկրետ հրապարակեց «Պարենհարկի մասին», որով փաստորեն սկսվեց նոր տնտեսական քաղաքականությունը: Թեև այն վերաբերում էր ամբողջ ժողովրդական տնտեսությանը, այնուամենայնիվ, առաջնահերթ նշանակություն տրվեց գյուղատնտեսության զարգացմանը:

Գյուղատնտեսության վերականգնմանն ու զարգացմանն ուղղված առաջին ագրարային միջոցառումը 1920 թ. դեկտեմբերի 28-ի հեղկոմի դեկրետն էր՝ հողի մասնավոր սեփականության վերացման մասին[4]: Այդ դեկրետով կալվածատերերից, եկեղեցիներից,վանքե-

---

[3] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ.1, գ. 1. գ. 18, թ. 5:*

[4] *Նույն տեղում, ֆ.1, գ. 12, գ. 29, թ. 15:*

րից և մասամբ ունևոր տնտեսություններից բռնագրավվեց շուրջ 200 հազար հեկտար հող և անհատույց հանձնվեց գյուղացիությանը: Դա, իհարկե, չլուծեց սակավահողության հարցը: «Հայաստանում,- նշված է Լոռու գավառային գյուղացիական համագումարի որոշման մեջ,-հողերի բռնագրավումը չտվեց այն արդյունքը, ինչ որ մյուս հանրապետություններում: Նա ավելի շատ սկզբունքային, քան որևէ էական տնտեսական նշանակություն ունեցավ սակավահող գյուղացիության շահերի տեսանկյունից»[5]: Քանի որ երկրում խոշոր կալվածատիրական տնտեսություններ չկային, և հիմնականում մանր գյուղացիությունն էր իշխում, հողի ազգայնացումը չլուծեց ագրարային հարցը: Դրա լուծման հիմնական ուղիներն էին հողաշինությունը և ոռոգելի հողատարածքների ընդլայնումը: Այդ է պատճառը, որ նէպ-ին անցնելով՝ հատուկ ուշադրություն դարձ-վեց ջրաշինարարական աշխատանքներին[6]:

1921 թ. ապրիլի կեսին սկսվեցին ջրանցքների մաքրման և վերականգնման աշխատանքները: 1922-1923 թթ. վերականգնվեցին 430 ջրանցքային առուներ, վերանորոգվեցին 42 հիդրոտեխնիկական կառույցներ:

Նոր ջրանցքներ և ջրհան կայաններ (Էջմիածնի, Շիրակի, Շահումյանի, Կարճևանի, Սարդարապատի ջրանցքներ) կառուցվեցին 1920-ական թվականներին: Մինչև 1928 թ. նոր ոռոգելի հողերի աճը կազմեց 8.6 հազար հեկտար[7]: Դա բաժանվեց սակավազոր տընտեսություններին: 1922 թ. թույլատրվեց նաև հողի վարձակալությունը: Անասնա-զուրկ գյուղացիությունը ստացած հողը մշակել չէր կարողանում և վարձակալության էր տալիս հարուստներին: Դա ձեռնտու էր չքավոր գյուղացիությանը: Բավական ծանր էր անասնապահական շրջանների վիճակը. տարբեր գավառներում բացվեցին անասնաբուծարաններ, որոնք նպաստում էին ցեղայնության բարձրացմանը (Կամոյում, Լոռի-Փամբակում, Դիլիջանում, Մարտունիում և այլն): Ամենուր զգացվում էր գյուղգործիքների կարիք: Հիմնական գործիքներն էին գութանը, արորը և սայլը: 1924 թ. կար 5293 գութան և 22,3 հազար արոր, իսկ 1927 թ.՝ 13000 գութան և 50,4 հազար արոր: Այս ամենը չէր բավարարում գյուղացիության պահանջները:

Նէպ-ի տարիներին սակավահող տնտեսությունների վիճակը որոշ չափով բարելավելու նպատակով գյուղացիներին վերաբնակեցնում էին նոր յուրացված հողերի գոտում: Նրանց համար ստեղծվում էին բարենպաստ պայմաններ: 1928 թ. հոկտեմբերին ՀԽՍՀ կենտգործ-կոմի նախագահությունը որոշեց. «Այն գյուղացիներին, որոնք կտեղափոխվեն, համաձայն հողժողկոմատի մշակած ծրագրի, մի շրջանից մյուսը, ազատել բոլոր տեսակի հարկերից և հասարակա- կան պարտականություններից երեք տարի ժամանակով, հաշվելով 1929 թվականից»[8]:

---

[5] *Հայաստանի գյուղատնտեսությունը 40 տարում, Ե., 1960, էջ 47:*

[6] *ՀԱԱ, ֆ.123, գ. 16, գ 25, թ. 4:*

[7] *ՀԽՍՀ կառավարություն, 1928 թ. հաշվետվություն, Ե., 1928, էջ 27:*

[8] *ՀԱԱ, ֆ. 128, գ. 1, գ. 7, թ. 24:*

Այսպիսով, իշխանությունների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ, նէպ-ի հետևողական կենսագործմամբ սեղմ ժամկետում վերականգնվեց գյուղատնտեսության նախապատերազմյան մակարդակը, գրեթե լիովին կարգավորվեցին հայկական գյուղում գոյություն ունեցող հողային բարդ և խճճված հարաբերությունները, գյուղացիությունը կարողացավ ստեղծել ամուր տնտեսություններ: Խորհրդային իշխանության ագրարային քաղաքականությունն արմատապես փոխեց գյուղի սոցիալական դեմքը և նախադրյալներ ստեղծեց գյուղացիության նոր տիպի շերտավորման համար: Նէպ-ի կենսագործունեությամբ գյուղում ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական լուրջ տեղաշարժեր էին տեղի ունենում:

Հայկական գյուղը հիմնականում սկսեց շերտավորվել 1923 թ. հետո, երբ նկատելիորեն նվազեց չքավորների քանակը, որոշ չափով աճեց կուլակների թիվը, և հիմնականում սկսվեց միջակ գյուղացիության առաջացումը: Միջակ գյուղացիությունը XIX դ. 20-ական թվականների ընթացքում դարձավ գյուղի հիմնական դեմքը և գյուղատնտեսական արտադրության հիմնական մասը կենտրոնացրեց իր ձեռքին: Դրան բոլոր միջոցներով օժանդակում էին իշխանության մարմինները:

Ինչպես նշվեց, նէպ-ով խրախուսվող շահագործողական ապրանքադրամային հարաբերություններից օգտվեց նաև կուլակությունը: Հատկապես առաջին տարիներին կուլակությունն արագ ամրապընդեց իր տնտեսությունը և լայնորեն ծավալեց շահագործողական գործունեություն (վարձով էր տալիս գյուղգործիքները, քաշող ուժը, սերմացուն, վարձում չքավորների հողերը և այլն): Սակայն պրոլետարիատի դիկտատուրան հնարավոր միջոցներով սահմանափակում էր կուլակային տնտեսությունների աճը:

Նէպ-ի տարիներին անընդհատ ամրապնդվող կուլակային տնտեսությունների կողքին զգալի թիվ էր կազմում անհող և անասնազուրկ գյուղացիությունը: «Հայաստանում այնպիսի սոցիալական պրոցեսներ են տեղի ունենում,- նշվեց ՀԿ(բ)Կ III հանրագումարում (1924 թ.), որ մի կողմից կուլակն է առաջ գալիս, մյուս կողմից շերտավորված բատրակներն ու չքավոր գյուղացիությունը»[9]:

Հայաստանում գյուղի շերտավորմանն առանձնապես խթանում էր գաղթականությունը, որի հիմնական մասը ծանր վիճակի մեջ էր և հաճախ դիմում էր կուլակների օգնությանը:

Սակայն գյուղացիության տարբեր շերտերի ոչ հստակ սահմանման և կյանքում դրանց սահմանազատման դժվարությունները հաճախ գյուղացիության դժգոհության պատճառ էին դառնում: Գյուղացիության շերտավորման հիմքում, ինչ խոսք, ընկած էին ցանքատարածքները, անասնագլխաքանակը, գործիքները և այլն: Սակայն միայն մեխանիկական տվյալներով, առանց նրանց եկամուտները հաշվի առնելու դժվար է ճիշտ սահմանազատել գյուղացիության տարբեր շերտերը: «Իրական կյանքի մեջ,- նշված է 1926 թ. մի հետազոտությունում,- տնտեսությունները այնպես են մոտենում իրար

---

[9] *ՀԱԱ, ֆ. 1, գ. 44, գ. 1, թ. 22:*

իրենց կարողությամբ, որ ներկայացնում են մի միաձույլ սյուն, որն ունի երկու հակադիր՝ հաստ և բարակ ծայրեր և միջին մաս, բայց որտեղից է սկսվում այդ միջինը և որտեղ վերջանում՝ դժվար է որոշել»[10]: Իսկ ՀԿԿ Կենտկոմ ուղարկված զեկույցներից մեկում նշվում է. «Որոշակիություն չկա չքավոր գյուղացուն ճիշտ բնորոշելու գործում, մի դեպքում չքավոր են համարում նրանց, ովքեր հողից բացի ոչինչ չունեն, մի այլ դեպքում հող և մի զույգ եզ ունեցողներին»[11]: Հասկանալի է, որ շերտավորման մեջ հարաբերական պահը միշտ էլ կա, բայց չի կարելի այն ամբողջությամբ հարաբերական համարել:

Հարկ է նշել, որ հանրապետությունում գյուղացիության շերտավորումը հավասարաչափ չէր տեղի ունենում: Արարատյան հարթավայրի քաղաքամերձ շրջաններում, որպես կանոն, այն ավելի արագ տեմպերով էր ընթանում՝ կապված ապրանքադրամային հարաբերությունների զարգացման հետ: Իսկ լեռնային շրջաններում, որտեղ բնակչության հիմնական մասը զբաղված է անասնաբուծությամբ, շերտավորումը զգալիորեն դանդաղ էր ընթանում: Այստեղ խորն էր բևեռացումը: Կային ակնհայտ հարուստներ և տարրական միջոցներից զուրկ հազարավոր չքավորներ:

Գյուղի շերտավորման հարցերը մշտապես իշխանությունների ուշադրության կենտրոնում էին: 1925-1926 թթ. վիճակագրական ընտրովի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ գյուղացիության հիմնական մասը չքավորներն էին, որոնք կազմում էին ընդհանուրի 80%-ը, իսկ կուլակային տնտեսությունները՝ մոտ 2,5%-ը: Վիճակագրական տվյալները վկայում են նաև, որ միջակացման և կուլակային աճի տեմպերը բավական դանդաղ էին՝ պայմանավորված տնտեսության քայքայմամբ, սակավահողությամբ, գաղթականության հարցերով և այլն:

Չնայած գյուղացիության շերտավորման մասին գոյություն ունեցող տարբեր կարծիքներին՝ իրականությանն ավելի մոտ է ըստ գյուղատնտեսական հարկի կատարած խմբավորումը: Այդ տվյալների համաձայն՝ 1929-1930 թթ. գյուղի շերտավորումը հետևյալ պատկերն ուներ. չքավորները՝ 58%, միջակները՝ 40.5%, կուլակները՝ 1.5%[12]:

Ուշագրավ է, որ ունևոր խավն ավելի մեծ ակտիվություն էր դրսևորում, քան մյուսները: Օգտագործելով տնտեսական միջոցները՝ կուլակները հաճախ հանդես էին գալիս որպես ողջ աշխատավորության շահերի արտահայտիչ: «Գյուղում աղքատները ավելի կապված են հարուստների հետ, քան միջակների,- նշված է Արագածի շրջանային կուսկոնֆերանսի որոշման մեջ,- որովհետև հարուստները ի դեմս հարկին՝ օգնության են գալիս չքավորությանը, նրան պարտքով փող են տալիս, օգնում հացահատիկով և այլն»[13]: Ավելին,

---

[10] **Գեղամյան Գ.,** *Նէպ-ը և սոցիալ-տնտեսական փոփոխությունները Հայաստանում, Ե., 1978, էջ 121:*
[11] *Նույն տեղում, էջ 8:*
[12] *ՀԱԱ, ֆ. 1, գ. 15, գ. 8, թ. 32:*
[13] *ՀԱԱ, ֆ. 1, գ. 37, թ. 10:*

ձեռք բերելով տնտեսական հաջողություններ, կուլակները փորձում են վարել նաև հասարակական ակտիվ գործունեություն: 1926 թ. գյուղխորհրդի ընտրությունների ժամանակ զգալիորեն աճել է ունևորների տեսակարար կշիռը: Բացի դրանից, նրանք առևտրական կետեր էին բացում գյուղերում և բնակչությանն առաջին անհրաժեշտության ապրանքներ մատակարարելով՝ շուկայական կախման մեջ գցում իրենցից:

Ինչպես նշվեց, նէպ-ի առաջին փուլում պետականորեն թույլատրվեցին վարձակալական հարաբերությունները: Անշուշտ, դա տարբերվում էր նախկինից: Այժմ ոչ թե չքավորներն էին վարձում ունևորների հողերը, այլ ընդհակառակը՝ արտադրության միջոցներից զուրկ գյուղացիությունն էր հողը մշակել տալիս ունևորներին: Թեև դա նպաստում էր կուլակային շահագործմանը, այնուամենայնիվ, հիմնականում բխում էր նաև չքավորության շահերից: Այստեղ մեծ էր պետության կարգավորիչ դերը: «Մեր տնտեսական զարգացման խաղաղ պայմաններում,- նշեց ՀԿԿ III պլենումը,- մենք կարող ենք կուլակների զարգացումը դնել նեղ շրջանակների մեջ և կանխել պայքարի սուր ձևերը»[14]:

Սակայն դա միշտ չէր հաջողվում: Ունևորները դիմում էին զանազան միջոցների՝ իրենց դասակարգային պատկանելությունը քողարկելու համար: 1920-ական թթ. կուլակը շատ էր տարբերվում իր նախախորհրդային շրջանի տգետ կամայական նախորդներից: Առևտրավաշխառուական գործունեությունը նրան ավելի ճարպիկ էր դարձել: 1926 թ. խորհուրդների ընտրությունների ժամանակ նրանք ձգտում էին իրենց ներկայացուցիչներն ընտրել գյուղխորհուրդներում, իսկ եթե դա չէր հաջողվում, ընտրում էին իրենցից կախման մեջ գտնվող որևէ չքավորի կամ բատրակի[15]:

Դաշնակցելով գյուղի նէպմանական տարրերի հետ՝ կուլակությունը փորձում էր իր կողմը գրավել գյուղացիության հիմնական մասին: Իշխանությունները հնարավոր միջոցներով պայքարում էին նրանց դեմ՝ փորձելով արտամղել տնտեսական և հասարակական կյանքից: 1928-1929 թթ. նրանց հիմնական մասը, որպես հանրօգուտ աշխատանքներով չզբաղվող, ձայնազուրկ արվեց: Սովորաբար ձայնազուրկների վրա անհատական (բարձր) հարկ էր նշանակվում և արգելվում տնտեսության մյուս ճյուղերում աշխատել: Կուլակային տնտեսության զարգացումը սահմանափակելու ներգործուն միջոցը հարկային և վարկային քաղաքականությունն էր: 1928-1929 թթ. գյուղհարկից ազատվել էր գյուղացիության 46%-ը (չքավոր տնտեսություններ), նորմալ հարկատու էր 52,4%-ը (միջուկը), և անհատական կարգով հարկվելու էր 1,6%-ը (կուլակ)[16]: Հանրապետության տարբեր շրջաններում այդ տվյալները տարբեր էին (հաշվի առնելով յուրաքանչյուր ընտանիքի եկամուտները):

---

[14] ՀԱԱ, ֆ. 1, գ և գ. 20 և թ. 16:

[15] Նույն տեղում, ֆ. 1, գ. և գ. 20 և թ. 16:

[16] Նույն տեղում, ֆ. 1, գ. 4, գ. 201, թ. 16:

1926 թ. վիճակագրական տվյալներն ամփոփելով՝ ՀԿ (բ)Կ VI համագումարը նշեց. «Այժմյան հայկական գյուղի սոցիալական դեմքը բնորոշվում է՝ ա) միջակ գյուղացու գերակայությամբ, որը գյուղի հիմնական դեմքն է դարձել, բ) Անցյալի գյուղի ծանր ժառանգության շնորհիվ մինչև այժմ դեռևս շատ բարձր է չքավոր տնտեսությունների տոկոսը, գ) շերտավորման պրոցեսի շարունակության շնորհիվ որոշ չափով աճում են նաև կուլակները»[17]: Իշխանության մարմինները ձգտում էին կուլակներին մեկուսացնել չքավորներից ու միջակներից:

Այսպիսով, 1920-ական թվականներից Հայաստանում կենսագործվող նէպ-ի շնորհիվ՝ գյուղատնտեսությունը բռնեց անշեղ վերելքի ուղին՝ սերտ ժամկետում գերազանցելով նախապատերազմյան մակարդակը: Սակայն դա նախկին մակարդակի վերականգնումը չէր: Խորհրդային իշխանության ակտիվ միջամտությամբ փոխվեց գյուղի սոցիալական դեմքը, գյուղում տեղի ունեցան շերտավորման նոր գործընթացներ: Չքավորների ու բատրակների կրճատման հաշվին գյուղի հիմնական դեմքը դարձավ միջակ գյուղացիությունը, որը գյուղատնտեսական մթերքների հիմնական արտադրողն էր: Թեև այդ տարիներին որոշ չափով աճեց նաև կուլակության թիվը, սակայն, ըստ էության, նա մեկուսացվեց գյուղացիական մյուս շերտերից և արտամղվեց ինչպես տնտեսական, այնպես էլ հասարակական-քաղաքական ակտիվ գործունեության ասպարեզից: Զգալիորեն նվազեց չքավոր գյուղացիության տեսակարար կշիռը:

НЭП И РАССЛОЕНИЕ КРЕСТЬЯНСТВА

СТЕПАНЯН Н. Р.

Резюме

В Армении переход к нэпу произошел в особых условиях, а именно: малоземелья, экономической разрухи, отсутствия техники, что отразилось на экономике республики. Нэп призван был восстановить экономику Армении и спасти ее население от голода. В результате проведенной аграрной политики в деревне произошел новый процесс расслоения, вследствие чего уменьшилось число бедняков и батраков, середняк стал основной фигурой деревни, кулачество же было вытеснено как из экономической, так и общественно-политической сферы.

[17] *Նույն տեղում, ֆ. 1, գ. 18, գ. 7, թ. 12:*